



ՄԱՐԱԹԱՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ : 1 ՅՈՒՆԻՍԻՐ 1887

ԹԻԻ 3858

ՄԱՐԱԹԱՐԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառաց համար 70 դր: եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, որաւորունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name and Address/Details. Includes entries like Գ. ԶՕՂԱՊ, Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ, ԿԱՅԵՌՈՒԿ, etc.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՌԻՐԱՅԹ 30 ՅՈՒՆԻՍԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐ ԽՆԴԻՐ

ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ

Բեղերսպուրկի մեր թղթակիցը կը հաղորդէ բաւական ծանր լուր մը: Կովկասու կառավարութիւնը կ'առաջարկէ Բեղերսպուրկի կեդրոնական իշխանութեան՝ մի նոր օրէնք Հայոց դպրոցներու համար: Ըստ այդ օրէնաց այսուհետեւ Հայոց դպրոցները...

Այս տեղեկութիւնը կը հրատարարակենք առ այժմ ամենայն վերապահութեամբ, թէպէտեւ չունինք զօրաւոր պատճառ մը երկմտելու նորաընտրութեան մասին:

Իշխան Տօնտուքով Կօրսաքով կը կարծէ թէ այդ նոր օրէնքով —եթէ երբեք ընդունելի լինի— ծանր հարուած մը եւս կրնայ տալ Ռուսահայոց ազգայնութեան, սակայն կը սխալի:

Յորմէ հետէ իշխանը կը կառավարէ Կովկասն եւ Անդրկովկասը, դիմած է միշտ ամէն միջոցներու որպէս զի փճացունէ Կովկասու զանազան ազգութիւնները, սակայն իւր ձեռնարկները բնաւ չարտաւեցան յաջողութեամբ, եւ ազգային ինքնաճանաչութեան գաղափարն աւելի քան երբեք զարգացաւ այդ ազգութիւններու սրտին մէջ:

Այդ ազգութիւնները կը նկատեն Կովկասու արդի կառավարութիւնն ոչ թէ պաշտպան եւ բարեկամ իշխանութիւն մը —ինչ որ կառավարութեան մը պարտականութիւնն է լինել— այլ անողորմելի թշնամի մը իրենց ազգայնութեանց, հետեւաբար ըստ այնմ իրենք ալ համապատասխանող զգացումներ կը տածեն այդ իշխանութեան նկատմամբ: Տօնտուքով իշխանը կ'ընդունէր ունի մտածելու թէ իւր ձախորդ քաղաքականութիւնն ո՛րքան աննպաստ է իւր Տէրութեան շահույ: Կովկասու կառավարչապետը մատուցած է առ կեդր. կառավարութիւնն տեղեկագիր մը յորում կ'ըսէ թէ՝ զօրաւոր բանակի մը ներկայութիւնն ի Կովկաս անհրաժեշտ է միշտ, վասն զի Կովկասեան ազգութեանց տրամադրութիւններն համակրական չեն ռուսական հայրենեաց համար եւ թէ արտաքին պատերազմի միջոցին պէտք չէ վստահիլ այդ ազգութեանց:

Երբ Միքայէլ Մեծ-Դուքսը կը կառավարէր Կովկասն, այսպիսի տեղեկագիր մը մատուցանելու հարկին մէջ երբեք չէր գտնուած: Կովկասեան ժողովրդոց համակրանքը նա կարող եղած էր գրաւել:

Մեզ համար ամենէն վշտալի պարագայն այն է որ այս խնդրոց մէջ Վեհ. Մակար Կաթողիկոսի գործունէութեան մասին բնաւ տեղեկութիւն չունինք: Մակար Կաթողիկոս եւ Սիւն-հոդականը իրենց եռանդը ցոյց կուտան ուրիշ ասպարէզներու մէջ: Կարգադրելով անձնական հաշիւներ, վրէժ լուծելով այն եպիսկոպոսներէ եւ վարդապետներէ որք հակառակ էին Մակար Սրբազանի կաթողիկոսական ընտրութեան, վարձատրելով անարժան եկեղեցականներն որք իրենց կողմնակիցներն էին, ահա՛ էջմիածնի գործունէութիւնն:

Իսկ միւլթարական միայն մէկ պարագայ կայ: Կը հաղորդեն թէ էջմիածնայ մատակարարարութիւնը լաւ

վիճակի մէջ է: Ենթադրելով թէ ստոյգ լինի այս լուրը, ներելի է մեզ ըսել թէ Հայոց Կաթողիկոս մը եւ հայ եպիսկոպոսներն իրենց ազգային եւ կեղեցական նշարտականութիւններ լիովին կատարած չեն համարուիր, աւելցնելով էջմիածնայ դոմին մէջ մի քանի եղ, եւ արտադրել տալով մի քանի հարիւր ֆունտ կարագ աւելի:

Արդեօք ուրիշ յոյսեր տածելը ներելի է:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ԻԶՄԻՐ, 24 յունուար

Ինչ կ'ուզէք որ գրեմ' ձեզ Զմիւռնիոյ վրայ: Ընդարձակ ծովածոցի մը եզերքը տարածեալ, նորաճն բայց վատագործ, երկրաչափական ճշդութեամբ ու օրինօք հաստատուած բայց բնական զեղեցիկութեան գուրկ, հսկարա, վայրախօս, հարուստ, գործունէայ ու աղմկալից քաղաք մը՝ ահաւասիկ Փոքր Ասիոյ մեծ անուն ու վարժամ նաւահանգիստը:

Տարբեր ցեղերով, ազգերով, կրօնքով ու համոզումներով, գաղափարներով ու կրթութեամբ բաժանեալ այս քաղքի բնակիչները կը միանան միայն իրենց անուանի քաղաքին արուած գովեստից մէջ:

Այդ քաղաքին՝ այս նաւահանգիստին դեղեցկազոյն շինութիւնը՝ նուիրական է՝ հոս վաճառականն՝ յարաբերութիւնը կը կտրէ բեզմէ, դատաւորը՝ թու դատը չի բններ, բժիշկը կը մերժէ զբեղ գաբմանել... կը վախճամ որ մինչեւ անգամ պղտիկ դաշոյնի հարուած մը չ'ստանաս՝ թէ որ համարձակիս գէշ լսօսելու անոր վրայ: Ի փոխարէն ամեն ինչ ներեալ է. ազգից ի գատ. բնադատէ՝ որչափ որ կ'ուզես, ազգապէ՛ որչափ որ կրնաս, երգէ՛ թէ որ սիրտ ունիս կամ արտասուէ, եթէ պէտք կ'զգաս, ոչ ոք զլուսը պիտի դարձնէ բեղ հայելու: համար ինչպէս կ'ըսեն Իզմիրցիք:

Հասարակաց կեանքը կ'անցնի ու կ'անցնի յաւաստական միօրինակութեամբ այս քաղքիսներու քաղքին մէջ: Գիշեր ու ցօրեկ, առտու կամ իրիկուն, ամեն մարդ կը ժողուի սրճարաններու մէջ, դրամի տէրն ու մտքի տէրը, սրտի տէրն ու գրչի տէրը, լեզուի տէրն ու դաշոյնի տէրը զարմանալի մը տեքմութեամբ կը հաւաքուին հոս:

Զմիւռնիա հակապատկերներու քաղաքն է: Ուղեւորութեանց ամենէն նոր եւ ամենէն հին միջոցները քովէ քով կը տեսնես: հանդարտաբայլ ու ծանրաբարոյ ուղտին մօտէն կը սրանայ չոգեկառքն շնչահատ արծուի մը սէս: հող լեռան կողին վրայ լուսկաց աւերակներ ու հոս նորաճն քա-

դաքը՝ դուարթ ու ոգեւոր. այս կողմն օս-
մանցին լուրջ ու խոփող, այդ կողմն օտա-
րականն անհանդարտ ու տենդավար. մի-
եւ նոյն չրջանակի մէջ աղագոսերն ու օտա-
րամուն, հայ լեզուն սիրողն ու (ափսոս)
հայ լեզուն խօսելէ ամչողն. առաջնորդ մը
որոյ համարը զ'աշխարհ կը թնդացնէ ու
անդին հալածական գրագէտ ու լրագրա-
պետ մը ցաւոց ու տառապանաց մահճին
վրայ մոռցուած: վերջապէս մէկ կողմն Աբե-
ւեյէան Մահաւն հզօր պաշտպաններու կող-
թընած ու անոր մօտ խորտակուած գրիչ
մը ու խեղդուած ձայն մը. . . Աբգարայ:

Իզմիրի աղագային վարժարանները փա-
ռահել չէնքեր են ու նոր է ամեն բան ա-
ղոնց մէջ. սրահներն ու սենեակները, տախ-
տակներն ու սեղանները, գաւիթն ու սան-
դուխը. նոր են նաեւ անշուշտ աշակերտ-
ներն ու վարժապետները, վասն զի այս մե-
ծապանծ չէնքերու մէջ համեստ ու խոնարհ
նախալիրթարան մը միայն գտայ: Իրենց
կրթական փրճակէն աւելի դրսի տեսքովն
կը փայլին այս վարժարանը, սուղբէն ար-
տաքին տեսքի հոգածութիւնն իզմիրցւոց
հիմնական հանգամանքն է:

Այս տեղ աղագային ոգին ամեն ոգինե-
րու պէս անտեսանելի ու աներեւոյթ է:
Կայ սերունդ մը, աղք մը, որոյ զաւակ-
ներն են այստեղի հայերը, կայ աշխարհիս
վրայ հողի մէկ անկիւն մը ուր իրենց եղ-
բայները կ'ապրին եւ ուր իրենց նախա-
հարք ապրած են ատենով. ասոնք այն տե-
սակ հարցումներ են որ իզմիրցի Հայոց մըտ-
քէն անգամ թերեւս չ'անցնին:

Ապահով իրենց հարուստ կացութեան
մէջ, անդորր իրենց ներկային ու ապագա-
յին վրայ, իզմիրցի Հայոց բոլոր քանքն ու
խնամքն իրենց բաղքին, իրենց եկեղեցւոյն,
իրենց դպրոցին, իրենց քաղիւնոյն յատկա-
ցած է:

Հայոց Միացեալ Ընկերութեանց մա-
տուցուած դոյզն օգնութիւնն իզմիրցւոց
գաստիարակութեան յատկացեալ գումարէն
գողցուած ստակ մ'է միայն այս տեղի մար-
դոց աչքին:

Եւ ինչե՞ր չեն կրնար ընել այս տեղի
հայերը լուսաւորութեան գործին մէջ:

Ա՛հ, թէ որ ազգու ձայն մը բարձրա-
նար, ոչ թէ անէծք կամ նախատինք տե-
ղալու այս կամ այն լրագրին, այլ կոչում
մ'ընելու այս աղագայնոց սրտին, թէ որ
ջանադիր ըլլար ոք յիշեցնելու այս հայերուն
այն նուիրական կապերն որ հեռաւոր հայ-
րենեաց մը հետ ըլլալուն համար տառեւ
եւս զօրաւոր ըլլալ պէտք են, քանի՜ քանի՜
վարժարաններ մէկէն պիտի կանգնուէին մեր
բազմախարստ երկրին մէջ. վասն զի իզմիրցի
հայերը բարի անձինք են, եւ եթէ ազ-
գասիրութեան կրակը չի վառիր բայց բո-
լորովին ալ մարած չէ ու միայն բարեպաշտ
ձեռք մը պէտք է մէկդի ընելու զայն ծած-
կող մոխիրը. եւ ս'ըր է այդ օրհնեալ ձեռքը:

Գ. ԶՕՀՐԱՊ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ

Ի ԹՈՒՐԹԻՍ

Ո՞վ կը կարծէր թէ Թուրքիոյ անդրա-
նիկ լրագիրը Փրանսերէն թերթ մը եղած
ըլլար, եւ սակայն պատմական իրողութիւն
մ'է որ Ֆրանսայի առաջին հանրապետու-
թեան գետապանը Վէրնիւրը Փրանսերէն
թերթ մը տպել կուտար ի Բերա, Սուլթան

Մէլիս Գ.ի օրով 1793ին եւ ՍԵՄԲՈՒՆՈՒԿԻՆ
չարժումներուն վրայ լուր կը տարածէր ա-
նով: Թուրքիոյ մէջ լրագրութեան հիմնա-
դիր եթէ դեսպանն իշխու չըսենք, այդ տիտ-
ղոսը պէտք է տալ գոնէ Ալեքսանդր Պաք
անուն անձի մը, հանրածանօթ Պաք պէյի
հօրն՝ որ 1825ին իզմիր սկսած էր հրատա-
րակել Սէֆաթէ-է-Մը ԼՕթէ-ն որ մի քանի
անուններ փոխելով շարունակած է մինչեւ
1828. նոյն Ա. Պաք Պոլիս գալով 1831ին
հրատարակեց զՄեքէթէ-Օթման որ նոյն
տարւոյն գեկտ. 29ին թուրքերէն հրատա-
րակուած է Թաֆէթի Վաֆայէ անուամբ: Ա.
Պաքի մահուանէն ետքն 1856ին Ֆրանչէսքի
անուն մարդ մը մինչեւ 1841 զայն շարու-
նակած է: Պ. Էտվարթս 1838ին իզմիրի
մէջ կը հրատարակէր Էնթաթ-է-Մը Սթըն, որ
ցարդ կը շարունակուի եւ Փրանսերէն թեր-
թից հնազոյնն է մնացած: 1846ին է+ Գ. Է
ԼՕթէ-ն եւ Ժոն-Էմիլ Գ. Սթըն փոխադրուեցան
Պոլիս եւ ի մի ձուլուելով եղան Ժոն-Էմիլ Գ.
Գ. Մեքէթէ-Օթման: Սթընը 1845ին հը-
րաման ստացաւ Ճէրիտէի Հափաթիւր հրա-
տարակելու, կարեւորագոյնն համարուած
թրքական լրագիրներուն: 1865ին երեւցան
Թիւրքի, Գուրիէ տ'Օրիան. 67ին սկսաւ
հրատարակուիլ Մեքէթէ ի Պոլիս որ շուտով
խափանուեցաւ. Խմբագիրն Ա. Ս. ծանօթ
իւր եղբերական կամ լաւ եւս եղեւնական
վախճանմամբ՝ գնաց Լոնտրա եւ նոյն տար-
ւոյն օգոստոսէն սկսաւ հրատարակել նոյն
թերթին Անգլիոյ մայրաքաղաքը:

Վերջին 25 տարիներու շրջանին լոյս տե-
սան այլ եւ այլ թերթեր որոց հաջիւ ա-
նունները կը յիշուին *):

Պոլիս մէջ կը տպուին այժմ.

20 Թրքերէն թերթ մեծաւ մասամբ պար-
բերական 1)

20 Հայերէն 2)

8 Գունարէն 3)

6 Ֆրանսերէն 4)

1 Արաբերէն 5)

1 Պարսկերէն 6)

1 Սլանիերէն, երբայական տառերով 7)

Գաւառներու մէջ՝ 33, որոց 27ը (8-9)
պարբերական:

*) Լէթայիֆը ասար, Աբրաճ, Խիււա-
սաթ իւլ էֆեւար, Թէրազզը, Միւսէյիւ, Մուհիպ,
Իթթիհատ, Պէտիր, Հաֆայիւ իւլ
Վաֆայէ, Ասըր, Սատաֆաթ, Պասիթէթ,
Սէլամէթ, Խալիթ, Իլան, Վաֆայի զաֆ-
թիյէ, Հատիդա, Սինէի վաթան, Թասվիրի
էֆեւար, զաւեշտական Տիօթէն (Փրան-
սերէն եւ Թուրքերէն, Թ. Գասաթի), Խայալ
Գըրգ անպար, Չընկըրագլը թաթար, Թէ-
աթրո, Թէլէկրաֆ, արաբերէն Էլ ճէֆայիպ,
Փրանսերէն Լէվընթ թայմա, Լէթուալ
տ'օրիան, Օրիան Փինանսէ, լա կազէթ
տ'Օրիան, Բրոկէ, լը Մէսածէ տ'Օրիան,
(Օ. Խակէտէր), Ռըվիւ տը Բէնա, Երզնիս-
կան (տը Գասթօնի) Ռըվիւ, տը Գոնսթան-
թինօր, իւ Լէվանթինօ (խաւերէն):

1) Թարիֆ, ամենօրեայ պաշտօնական,
Ճէրիտէյի ասկերիյէ շաբաթն. 2 անգամ,
Ճէրիտէյի թէպուլիյէի ասկերիյէ 18 օրն մի
անգամ, Վէզայի թէպուլիյէ, Ճէրիտէի հա-
փաթիս բացի ուրբաթ օրերէն, Թէրճէմանը
Հաֆիզաթ, Օսմանլը՝ Փրանսերէն-թուրքե-
րէն բացի կիրակի օրերէն, Ճէրիտէթ իւլ
Հաֆայիպ, Վասթայի սէրիթ, Զրաաթ,
Սըհնէթ, Տօթթ. Իւթիւճեան. Սատաթթ,
Աթֆալ, Կայրէթ, Սէպաթ, Միզան, Համիյ-
էթթ, Խըզլէթ, Կիւլէն, Միւրիւվէթթ,

2) Մասիւ, Մանգուլի էֆեւար, Հայ-
րենիք, Արեւեք, Ճէրիտէի շաբաթիյէ, Մէճ-

Թրքերէն կարեւորագոյն թերթ համար-
ուած է Թաթէ՛ Երբեմն Վաֆլթ՝ խմբագ-
րապետ Սայիտ պէյ, որդի նորոգ հան-
գուցեալ Քէմալ վաչայի: Թարիֆ՝ Տաճ-
կաստանի Հէրալտ կամ Թայմզ եթէ կարե-
նար կոչուիլ, արտօնատէրը՝ Ֆիլիք Էֆէն-
տին պէտք էր նմանցունել իւր միջնորդին

մատյի՛ ասպար ամենօրեայը: Փուճը, Գրա-
կան շարժում, Երկրագ ունտ. Գէրալտ շաբաթ-
86 յուլիսէն ի վեր ամսաթերթ Տ. Ն. Տա-
ղաւարեան. Բուրաստան մանկանց, Բիւրակն,
Խիկար, Աւետարեր, Ճաշէ ասկէն Գալա-
թէն գրաբառ անսաթերթ 86 յունուարէն
ի վեր, խմբագրութեամբ Տ. Տ. Մ. Գարա-
դաշեանի եւ Յ. Գուրգէնի, Հնալ՝ 86էն ի
վեր 15 օրն մի անգամ. Տ. Տ. Փափազ-
եան, Մալէլ շաբաթ երկու անգամ, 86 դեկ-
20էն սկսեալ, Տ. Ա. Սաֆեան, Մէնաթ
գրական հանդէս 86 էն ի վեր հայատառ
թրքերէն, կը տպուի Կ. Պոլիս Այնթապի
համար, խմբագիր Տ. Վ. Քիւրքճեան, եւ
Տնտես, ամսաթերթ 86 հոկտ. 1էն ի վեր
արտօնատէր Տ. Յ. Արշակ, խմբագրապետ
Տ. Ե. Տէմիրճիպաշեան, Լեզու, ամսաթերթ,
Ս. Վ. Տէրվիշեանի խմբագրութեամբ:

3) Նէօլոգոս, Վիզանթիս, Անաթօլի-
քոս Ասթիր, Անաթօլի, Ավլի, Ալիթէա,
Գոսթանի ինուրոյիս, Է գրական հանդէս մը:

4) Թիւրքի, Խաթէրն էքսքրէս, Լէվանթ
Հէրալտ, Ֆարաի Պոսթոն, Սթամուլ, Մօ-
նիթէօն Օրիանթալ (անգլիերէնով խառն
Փրանսերէն) Ժուրնալ տը լա շամպու. տը քօ-
մէրս տը Գոնսթանթինօր:

5) Էլ Իթիտալ:

6) Աթթէր:

7) Գրէմօնա:

8-9) Հաֆիզաթ էլ ասպար	Լիբանան
Սէյհուն	Ատանա
Մամուրէթ իւլ ալիլ	Խարբուլ
Ֆրաթ	Հալէպ
Զուրա	Պաղատա
Այտըն	Իզմիր
Խիւտալէնիկեար	Պրուսա
Էնվայը շաբաթիյէ	Էրզրում
Բաթի իւլ Թուճուզ	Թուճուզ
Սանտա	Եֆէն
Սուրիյէ	Շամ
Բուզնամէի վաղապի Մըսրիյէ	Գահիթէ
Անկուրա	—
Գասթէմունի	—
Կիրիտ	—
Թարապուտը Ղարալ	—
Սէլանիկ	—
Թրապըլօն	—
Գոնեա	—
Տիարալէքլը	—
Պահրը Սէֆիտ	—
Էտիրնէ	—
Սըֆաս	—
Մուսուլ	—
Գարէսի	—
Մանաթըր	—
Պիթիս	—

Պէրուլթի մէջ Արաբերէն՝ Էլ Մըսուհ,
Էլ Ճէննէ, Էլ Պէշիր, Լիսան իւլ հալ, Սէմա-
րէթ իւլ Փինուս, Էթթէգատտուլ, Էլ Նէ-
չէթ իւլ ուսուլիյէ, Էլ Ճինան, Էլ Մադ-
թիյի, Էթթայիլի:

Իզմիր՝ Լէմբարսիալ, Լա Բէֆօրս Սիալ-
թէա, Օմոնիա, Սմիրնի, Արշալոյս, Մամուլ:
Սէլանիք՝ Ֆարոս, Մաքէտօնիա, յունա-
րէն, Էլ Նիէնթօ, հրէայերէն, Լա Էքօթա,
հրէայերէն:

Բուճէլի Դարգի՝ Մարիճա, պուլկար-
Փրանսերէն, Ֆիլիքօթօլիս, յոյն-Փրանսերէն:

մէջ Ուսումընդհատու կամ Պէնիթենցիա : Երբ
առաջին անգամ ճանչեցինք զինքը Ֆիլիք
էֆէնտի Զորքընը քով կը ծառայէր քսանէն
աւելի տարիներ անցած են այնու ի վեր .
«Ճէրիտի կապալտութեան ծրարը թեւին
տակ սեղմած կ'անցնէր նա հապճեպ կա-
մուրջէն Գալաթայէն Պոլիս , եւ այդ ցրուիչ
համեստ պաշտօնը կատարած պահուն շատ
անգամ չունէր ձեռքն հովանոց մը կիզիչ ա-
րեւին եւ իւր քրտնաթոր ճակտին միջեւ : Այ-
սօր կենաց պայմանները գլխովին փոխուած
են իրեն համար : Ֆիլիք էֆէնտի աստիճանա-
ւոր քաղաքացի մ'է : Գուն ուրեք իւր ներքա-
ները կը հանդիպին սալայատակին . աշխա-
տութեան զիւցազն մ'է նա բարձրագոյն
շնորհաց արժանացեալ . յանձին Ֆիլիք է-
ֆէնտի Պոլսոյ լրագրութիւնն ալ ունի իւր
իշխանն օժտեալ ինչպէս կը վիպէն շատեր
իշխանավայել բարեմասնութեամբ մը՝ աղ-
քատախրութիւն . հազուադէպ զգացում
անոնց համար այդ իրենց անշուք անցեալն
հազիւ կ'ուզեն յիշել : Ամէն անոնք որ քըր-
տամբ կ'ուտեն իրենց հացը կրնան ըսել կամ
յուսալ թէ նոյն համեմատութեամբ կը
վարձատրին կամ պիտի վարձատրուին . ի-
րենց երկունքն ու ձգուք :

Մասնաւոր յիշատակութեան արժանի է
Ահմետ Միտհաթ էֆէնտի , կարեւորագոյն
գրական մարդոց ի թուրքս . ոչ միայն հրա-
պարակադիր այլ իրրեւ վիպասան , թարգ-
մանիչ , թատերագիր , պատմաբան եւ կո-
րովի քննադատ՝ առաջին կարգը կը բռնէ
թրքական գրականութեան մէջ : Իւր բեղմ-
նաւորութիւնը զինքը մականուանել տուած
էր գրականութեան շոգեշարժ մեքենան :

Յիշենք Ալի էֆէնտի՝ որոյ անօրինութեամբ կը
հրատարակուէր Պատիւթ , խորհրդարանա-
կան շրջանի առաջին թերթն յորում ժամա-
դիր կ'ըլլար թուրք գրականութեան սակե-
զօծ երկրասարգութիւնը : Յիշենք զԲէմալ
պէյ ալուէտ իւրեթի եւ երգիծարան Թէվֆիք
պէյ Թէրճէմալը Հազիդաթի . ծանօթ այս
վերջինն իւր ի Մաճառասն ուղեւորու-
թեամբ եւ Մաճառաց վրայ գրած յօդ-
ուածներով :

Լրագրութեան մէջ նշանաւոր եղած է
նաեւ հայագիր պաշտօնաւոր մը Բ. Գրան :
Կիրթ գրիչ , հմուտ այլ եւ այլ հին եւ նոր
լեզուներու , պատմութեան , օրինաց եւ Օս-
մանեան կարգ . ու սարքին , Պօղոս էֆէնտի
Պառնասեան վաղեմի աշխատակից Մասիսի
եւ խմբագիր Սէր հանդիսին , յաճախ իւր
շահեկան յօդուածներով կը շարունակէ
ծածկել Փրանսա-թուրք լրագրաց սիւներն
իրեւ ած-Բէօք առանց երբէք թերանալու
իւր պաշտօնաւորի պարտականութիւննե-
րէն զորս գիտէ կատարել ձեռնհասութեան
հաւասար ճշգրութեամբ : Երբ տարի աշխա-
տակցեցաւ Օսմանլը թերթին խմբագրու-
թեան . վերջին պատերազմին հրատարակեց
չարք մը ընտիր յօդուածոց հալերէն՝ որոց
թարգմանութիւնները տեսնուեցան Թիւրքի-
ի մէջ . բարձրագոյն գնահատութեան ար-
ժանացաւ Մասիս այդ յօդուածներով յորս
պետութեան շահերն եւ իրաւունքները
ջերմապէս կը փաստարանէր հայ թերթը :
Իրմէ ետքն ասպարէզ եկան Տեարք Օ. Իս-
կէնտէր որ հրատարակեց Մէսաժէ տ'Օ-
րիան . Յ. Աճէմեան՝ որոյ անխոնջ աշխատա-
սիրութիւնը նախընտրել կուտայ հայ օժան-
դակներ Ֆառ ալի Պօֆօրի հեղին լրագրա-
պետին : Ա. Անմեդեան , Սթամպուլի քաջ Փը-
րանսերենագէտ Ա. Ասկեմառն Իսթեթի գոր-
ծունեայ աշխատակիցը Երրինեան Մ. եւ Ե.
երբ տարիներէ ի վեր կը վարեն ու կը
խմբագրեն La Chambre de Commerce de

Constantinople թուրքերէն եւ Փրանսերէն .
գործի համանուն հաստատութեան , եւ ո-
րով ի յայտ կը բերեն այդ ուշիմ երկու
հարազատներ իրենց հմտութիւնն եւ ծա-
նօթութիւններն , տնտեսագիտական ծա-
նօթութիւններն : Քէլէկեան՝ արտօնատէր
եւ խմբագիր Սաատէթ թուրքերէն օրա-
գրոյն :

Օտարագրի հրատարակիչներու սակա-
ւածիւ կարգին մէջ Պ. Ուրթըր ուրոյն
զիրք մը կը բռնէ իւր ճաշակներովը , կեն-
ցաղավարութեամբ , հեզնական ոճովը որ
միշտ աշխարհութեամբ ճարակեալ մասնա-
ւոր սկզբնականութիւն մը փոխ կ'առնու
անշուշտ իւր գունաւոր . եւ ցոյցիկ զա-
ղափարներէն . կարծես թէ ասոնք ճիգ
մը կ'ընեն իրենց անհարազատութիւնը ձե-
ւին տակ սքողելու համար . ժամանակ
մը վաճառական , յետոյ . դեր-հիւպատոս ,
աւելի վերջը ընտոնեան թերթերու թղթա-
կից , երբ երբեմն նուագահանդէսներու ե-
րաժշտապետ , լուծակահար իւր քէֆին հա-
մար , այսօր Պոլիս , վաղը Պոլիսիւր , ժա-
մանակն ոսկոյ փոխարկելու վարպետ է Պ.
Ուրթըր . եւ բազում այն է որ իւր խօսա-
կցներուն վկայութեամբ կը կարօտի վեր-
ջապէս իւր գրածներուն համոզումն ստա-
նալու համար :

Միւս պաշտօնակիցները Պ. Քիրիմօրու-
լօ՝ Ֆար ալի Պօսֆօրի , Պէլիս՝ Մօնիթօն
Օրիանթալի արտօնատէրք ոչ նուազ ճար-
պիկ հրատարակիչներ , մինչեւ հիմայ բաւա-
կան յաջողակութեամբ կրցած են ապրիլ :
Ֆառ եւ Հայրենիք ամենէն յիւրաքանչիւր վա-
ճառուող թերթերէն էին մինչեւ հիմայ . Ա-
րեւելքի մէջ կ'ունենան իրենց հետեւող մը .
այլ Հայրենիք կայ ու կը մնայ ամենէն զիւ-
րամատչելին իւր ծայրագոյն ած-Բէօք թեամբ ,
10 փարա Սթամպուլ , 1 էվլընթ Թայմը , յետոյ
Բրօկիթ , տարբեր ժամանակներ եւ տարբեր
վարչութեանց ներքեւ շատ նշանաւոր եղած
էր Լաֆֆան Հանլիի ձեռքին մէջ . ոչ մի հրա-
պարակի թերթ այնքան յախուռն լեզուաւ մը
չէր խիզախեր նախկին վարչութեանց դէմ . եւ
թերեւս անտեղի չէր յարել թէ լեզուն գլխա-
ւոր պատճառներէն մին եղաւ մամուլի դէմ
ձեռք առնուած խտուրթիւններուն : Այ-
սօր՝ ինչպէս ամեն տեղական թերթեր ,
Սթամպուլ եղած է լուրջ եւ չափաւոր օ-
րագիր մը . իրմէ դժգոհները գայթակա-
կան Իրեթիներու թերթը կ'անուանէին եր-
բեմն , չնայելով որ Էթեթիէի խտաբարո-
յութեամբ կը հեզնէր , կը ձաղկէր սոսկա-
կան կենաց յորի կողմերը :

Փոքր մի եւս պիտի մոռնայինք թրքե-
րէն լրագրութեան մէջ արդարեւ նշանաւոր
հանդիսացողներէն Վսեմ Միւնիֆ փաշա ,
արժանընտիր պաշտօնեայ հանրային կըր-
թութեան : Գիտական ու գրական նիւթե-
րու վրայ մանաւանդ պարբերականներու
մէջ տուած յօդուածները մեծ խնամով կը
կարդացուին ընթերցասէր թուրքերէն . ոչ ոք ,
ի շարս իւր պաշտօնակցաց , ուսումնասէր է
իրեն չափով : Քառասուն տարեկան հասա-
կին մէջ կ'ուսանէր յունարէն եւ լատիներէն .
քաջ գիտէ արեւելեան երկու հնագոյն բար-
բառներն՝ Արաբերէնն ու Պարսկերէնը .
բաց ի արեւմտեան մի քանի կենդանի լե-
զուներէ , ուսուցիչ իրաւաբանական փրիւսո-
փայութեան եւ բարոյագիտութեան պետա-
կան բարձրագոյն վարժարաններու մէջ՝ Ն.
Վսեմութիւնն ոչ միայն իւր տեղն է ու
պաշտօնին մարդն , այլ օրինակելի անձ-
նաւորութիւն մը շատերուն :

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ՀՐԱՉԴԱՆԻ ԵՐԳԸ

ԻՄ ՄԱՀԸ

Երէ Լոմոնոսով Տիար Յ. Գուրգեն
Անճում ցամամբ մ'եկնէ իմ դէմ ,
Գլխուս բախէ իւր դիմ ու քնն . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Հուր-սառանճ եմ :

Երէ նախախ փառապաշտ
Հայ-Կամպէրբան ելած ի բեմ
Ձիւս պարսաւ տնգրարար . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Մուրաւաճ եմ :

Երբ դասեմ ի կարգ սրբոց
Մերուցի ոմն ԲՅԱԼԱՆԻԱՆԻԱՆ
Ուր բերան դուրս տայ . . . հուր եւ բոց . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Հրա-սրտան եմ :

Երէ Գրաւէր պէրաբունակ
Մերք բազմամտ , մերք անճամբ
Խառնէ իւր քան յիմ արգանակ . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Նուագ-բան եմ :

Երէ Գրիգոր Զիլիկիւրեան
Կամ փառապետ , դիմօք դիմեմ ,
Առաջարկեն զինն իմ արեան . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Զարագիւտ եմ :

Երէ գրաստ ոմն անաշխարակ
Կից արձակել փորձէ ինձ դէմ
Եւ չը գայեմ ես գայն իմ տակ . . .
Գիտցէ՛ք որ դեռ . . . Նուաւաւ . . . եմ :

Իսկ երբ Մասիս , Արեւելք , Մշակ
Գոցուին , եւ դէմս եկն , գերդ ինձ ,
Ըզ Դարուքեանն Ոսպնայ ճաշակ . . .
Ա՛հ , այն ատեն , վա՛յ ինձ , վա՛յ ինձ . . .

ԿԱՅՄՈՌԻԿ

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ՏՓՂԻՄ 10 յուլիս

Տարին սկսուեցաւ , եւ մեր լրագրու-
թեան խնդիրը նորից ուժգին կերպով հրա-
պարակ է դուրս եկել : Մի կողմից խօսուած
ու դատուածն այն մասին , թէ էլի ի՞նչ չը-
րատարակութիւնների պէտք ունինք , միւս
կողմից քննուածն գոյութիւն ունեցող պար-
բերական հրատարակութիւնների ուղղու-
թիւնն եւ ընթացքը : Պէտք է յիշեցնեմ ձեզ
որ լրագրի ուղղութիւնը մեծ նշանակութիւն
ունեցող մի խնդիր է մեր հասկացող դա-
սակարգերի համար : Լրագրի ուղղութեան
վրա , որքան մեզ յայտնի է , եւ ինչպէս մեզ
մօտ ամէնքը համոզուած են , Պոլսում , հա-
յերն այնքան էլ ուղղութիւն չեն դար-
ձնում : Եւ կարծումեմ որ այդ բանը Պոլսի
հայ ինդելիգենցիան կը խոստովանի : Լրա-
գրի որոշ ուղղութեան խնդիրն այնպէս չո-
շափելի կերպով առաջ է բերել Մշակն , որի
խմբագիր՝ Պ. Գրիգոր Արծրունին , իր տառն
եւ հինգ տարուայ խմբագրական գործու-
նէութեամբ , իր լրագրով ստեղծել է մի ու-
րոշ ուղղութիւն , առաջ է բերել մի որոշ
կուսակցութիւն , եւ շատ անգամ , մեծամեծ
յարձակումներին անգամ չ'նայելով , առաջ
է գնացել եւ առաջ է գնում այդ որոշ ուղ-
ղութեամբ : Մշակ միշտ ունեցել է իր անձ-
նուէր կողմնակիցները . Ռուսահայաստանի

համարեա բոլոր յայտնի գործերն . իրանց ոյժերը Մշակի էջերի վրա են դարձրել այդ լրագիրը միշտ առաջ է բերել նոր ոյժեր : Մշակը ստեղծել է մի դպրոց , եւ այսօր դոքա միշտ կը հանդիպէք Ռուսահայաստանում այսպէս կոչուած Մշակականներէ որոնք իրանց ջերմ համակրութեան հետ միասին մի տեսակ ներկայացուցիչներ են . Ռուսահայաստանի բոլոր անկիւններում՝ այն ոյժի , որն իր գործունէութիւնն սկսել է Տփլիսում 1872 թւականից , երբ Մշակի սկսեց հրատարակել , Ռուսահայ գործիչների մէջ մի ազմուկ ընկաւ Մշակի երեւան գալը մի թնդիւն էր այստեղի Հայոց մտաւոր կեանքի մէջ : Իսկոյն առաջ եկաւ մի մեծ կուսակցութիւն , որ միշտ յայտնի է իր ուղղութեամբ , եւ որը Մշակի դրօշակի տակն է , եւ դորա հակառակ մի փոքր կուսակցութիւն՝ որի բերան հանդիսացաւ Պետրոս Սիմէօնեանցի խմբագրութեամբ՝ Մեղու Հայաստանի լրագիրը : Այն օրից ի վեր մեզի մօտ կան երկու որոշ կուսակցութիւններ , Մեղուականներ եւ Մշակականներ , որոնք գործունեն ոչ միայն լրագրական , այլեւ դպրոցական եւ ուրիշ ասպարէզներում : Այսօր տեղի է ունեցել մի հետաքրքիր երեւոյթ , որ առիթ տուեց մեզ գրելու այդ տղերքն : Այդ երեւոյթը՝ Մեղու Հայաստանի լրագրի դադարելն է : Դուք անկասկած կ'գիտենաք որ Մշակ համարվում է ազատամիտ ուղղութեան թերթ , իսկ Մեղուս ստացել է խառնաժողովրդական ունեւը , կամ եւրոպական ձեւով պահպանողական : Այդ բաները բաւական են պարզելու համար թէ ինչ ուղղութիւն ունին այդ երկու լրագիրները : Մեղուս այժմ դադարեց , եւ այս մի ամենադժուր դիմաց է ապացուցանելու համար թէ որքան անհարող եղաւ Պետրոս Սիմէօնեանցի լրագիրը գահացնելու մեր ժողովրդի ցանկութիւններն , եւ որքան թոյլ գրեւորեցաւ նա մրցելու Մշակի դէմ , որի ոտքերի տակ այսօր արդէն գոյութեան հաստատու կայ : Մեղուս քսան եւ ինն տարի գոյութիւն ունեցաւ . մի քանի տարի առաջ տօնուեցաւ Թիֆլիսում նրա քսանհինգ ամեակը : Մեղուս դադարեց , թէեւ այդ կուսակցութեան ներկայացուցիչները դեռ մասնաւոր աշխատում են գործել , կամ աւելի լաւ է ասել զիմադրել Մշակին , որովհետեւ դոցա գործունէութիւնը Մշակին զիմադրելուն մէջն է միայն , եւ հենց այսօր Մեղուի ամենաջերմ համակրող աշխատակիցը՝ Սպանդարեան անունով հրատարակում է մի թերթ՝ Նոր-Դար , որը , նայած իր բռնած ընթացքին , իր գործ դրած միջոցներին , իր լրագրական գործունէութեան եղանակին , երբէք չի կարող իր նախորդի՝ Մեղուի հասակին հասնել , եւ անկասկած կ'դադարի միայն քանի մի տարիներ գոյութիւն ունենալուց յետոյ : Այդ գուցէ եւ հաճելի չէ մեր լրագրական աղքատ գրութեան մէջ , բայց այդ այդպէս է : Մշակին շատ մարդիկ մեղադրում են մի քանի կէտերում , եւ մենք բոլորովին միտք չ'ունինք պնդելու , որ այդ լրագիրը կատարելաբար է : Բայց անհրաժեշտ է , որ այդ լրագիրն արդէն մեծ ազդեցութիւն է ձեռք բերել , սիրուել է . կարգազուլ մեծ հետաքրքրութեամբ , միշտ նոր մտքեր եւ խնդիրներ է յարուցանում , շօշափել է եւ կ'շօշափի ամենակարեւոր խնդիրներ , ունի ամէնից շատ բաժանորդներ , եւ ապահովել է իր գոյութիւնը ժողովրդեան բռնն համակրութեամբ : Երբ Պ. Գրիգոր Արծրունու անձնական պատճառներով 1884 թւին Մշակը դադարացրեց մի տարով իւր գոյութիւնը ,

ամբողջ Ռուսահայաստանը միաբերան ցաւակցութիւն յայտնեց : Անհրաժեշտ է , որ Պ. Պետրոս Սիմէօնեանց եւ իւր լրագիրը շատ տարիներ առաջ գործել են եւ ազդեցութիւն են ունեցել , սակայն այս լրագիրը միշտ մի եւ նոյն անշարժութեան մէջ մնաց , եւ ինքն հարուածեց իր գոյութիւնն . եւ այսօր Մեղուս դադարում է , որովհետեւ միայն 200 բաժանորդ ունէր . թէեւ շատերը կարծուէին , որ Մակար Կաթողիկոսի օրով Մեղուս ապահով կ'լինի , ըստ որում այդ լրագիրը զիւր ցերեկ աշխատեց նորա կաթողիկոսական թեկնածութեան մասին , ինչպէս գիտէք դոք էլ Բայց , առաջ , իրողութիւնը մնաց իրողութիւն , թէեւ դեռ անցեալ օրերն Հայոց Կաթողիկոսը Մեղուի միջոցով յայտնեց իր շնորհակալութիւնն այն անձանց , որոնք շնորհաւորել էին իր տօնի օրը : Տեսնում էք ուրեմն որ Կաթողիկոսի օրկանը (թերթը) ապրել է կարողացաւ . այդ ուշադրութեան արժանի է . . . Մեղուի դադարելը ոչինչ տալաւորութիւն չ'իջեց . ցուել են միայն նոքա , որոնք սիրում են իրանց մտանքի վրա պարծանքով համարել թէ այդքան լրագիր ունին , բայց որոնք լրագրի արժանաւորութեան մասին երբէք չեն կարող մտածել : Անկասկած ինքն ըստ ինքեան ցաւալի է , որ քսան եւ ինն տարի գոյութիւն ունեցող լրագրի դադարումը ցաւ չի պատճառում , բայց չէ՞ որ դրա պատճառն ինքը լրագիրն է : Մշակի ֆէլիտօնիսդը բռնեց եւ խնայեց հեղինակին : Մեղուի լրագիրն մեջ այդ առիթով տալեց հետեւեալ . « Պետրոս Սիմէօնեանց , Սպանդարեան , Աբրահամ , Ա. Քիւմիւշեան , Գ. Եւանդուեան , Ա. Մանդիկեան եւ շատ ուրիշները , որոնք ցաւօք յայտնում են՝ առաջին իր օրդու , իսկ վերջիններն իրանց եղբոր՝ Մեղու Հայաստանի լրագրի մահին Յուզարկաւորութեան հանդէսը կ'կատարվի Ռոտինեանցի(1) տպարանում , իսկ հոգեհանգիստն Սպանդարեանի(2) տունում : Այդ հաւելքալէ հեղեղութիւնն առաջ բերեց անխնայ ծիծաղ ընթերցող հասարակութեան մէջ : Մեղուի դադարումից աւելի զայրոյթ պատճառեց դրա աշխատակիցներին մէկը՝ Սենեքերիմ Արծրունու մի նամակն , որը տպուեցաւ տեղական մի ուս թերթի մէջ : Այդ պարունը մեծ ցաւակցութեամբ խօսելով ռուս թերթի մէջ Մեղուի դադարման մասին , եւ համարելով այս բանը մի համազային դժբաղդութիւն , (այդ իւր կարծիքն է գուցէ) , այն միտքն է յայտնում իր այդ գրութեան մէջ , որ Մեղուի բաց մնացած տեղը պէտք է բռնէ ռուս լրագրութիւնը : Հասկանում էք , Հայոց լրագրի տեղը պէտք է բռնէ Ռուսաց լրագրութիւնը : Այդ տղերքն ընդհանուր զայրոյթ պատճառեցին : Ահա թէ ինչպիսի տխարաներ կան մեր մէջ , որոնք միշտ գոչում են , գոռում են , իրանց բանի պէտք են ցոյց տալիս : Ինչ անուր տանք : Սենեքերիմ Արծրունու եւ դրա նմանների անունը թող գտնի ինքը Պ. Մերենց , որ լաւ ճանաչում է իր այստեղի բարեկամներին , եւ անկասկած ողբում էլ է Մեղուի դադարման մասին . . . Այո՛ , Պ. Մերենց , Մեղուս դադարեց , Պետրոս Սիմէօնեանց էջմիածին է գնում , վեհարանի խորհրդական լինելու եւ Աբաբաբ ամսագիրը խմբագրելու . ուրեմն շտապեցէք ձեր սղթով եւ դաժանակամներով եւ հայ-

(1) Այդ այն տպարանն է , որտեղ տպւում էր «Մեղու»ն :

(2) Այդ պարունը «Մեղու»ի ջերմ աշխատակիցն էր :

հոյանքներով լեցնելու Պալի մի քանի հայ լրագիրների ձեռ առաջ բաց էջերը . . .

Անցնինք խնդրի միւս կողմին : Մինչ մի կողմից մեր լրագիրները պակասում են՝ նիւթական միջոցների քուլթեան պատճառով , միւս կողմից մեծ կարիք կայ արժանաւոր լրագիրների մէջ : Մեր ժողովրդի մտաւոր կեանքը մեծ ոյժեր է պահանջում իսկ ներկայումս մեր լրագրութիւնը շատ էլ հարուստ չէ : Թիֆլիսում հրատարակող մեր լրագիրներն այժմ են Մշակը , Աբաբաբ , Հաբաթաթ երթը Պ. Ա. Յովհաննիսեանի խմբագրութեամբ , Աբէլ-Եր ամսագիրը Պ. Տ. Նախարարի խմբագրութեամբ եւ Նոր-Դար թերթը՝ Պ. Սպանդարեանի խմբագրութեամբ : Ռուսահայերի մտաւոր կենտրոն համարուող Տփլիսում ուրիշ լրագիրներ չ'ունին : Պ. Հ. Առաքելեան խնդրի է տուել կառավարութեան Եւանդուեանով մի ամսագիր հրատարակելու , բայց մինչեւ օրս թոյլտուութիւն չէ ստացել , թէեւ արդէն չորս հինգ ամիս է անցել խնդրի տալու օրից : Այժմ դրաքննական կանոններն այնքան խիստ են , որ հայ լրագրութիւնն ամենածանր դրութեան մէջ է : Էջմիածնում շարունակվում է հրատարակվել Աբաբաբ ամսագիրն : Ռիշ հրատարակվել իններ մեք Ռուսահայաստանում չունինք : Սակայն մեծ կարիք կայ մեզ հարկաւոր են ամսագրեր . պէտք է զարկ տալ ժողովրդի ընթերցանութեանը . պէտք է ուսումնասիրել երկիրն եւ ժողովուրդը . պէտք է հրապարակ հանել շատ խնդիրներ . իսկ դրա համար հարկաւոր են շատ ոյժեր , նոր հրատարակութիւններ՝ եւ ի հարկէ որոշ ուղղութեամբ , որոշ Հայեցակէտերով , որոնցից դուրկ են մեր այժմ գոյութիւն ունեցող պարբերական հրատարակութիւնների մեծ մասը : Զի կարելի հերքել այս մաստն , որ արժանաւոր լրագիրն եւ ամսագիրը Ռուսահայերի մէջ միշտ կարող է գոյութիւն ունենալ եւ ընթերցողներ ունենալ , Պարբերական հրատարակութիւնների շատութեան կողմից Պալի հայերն աւելի հարուստ են . ձեզ մօտ լրագիրներ , Հաբաթաթ թերթ եւ ամսագրերն սուսկի պէս բռնում են եւ նոյնպէս էլ կարծեմ , ոչնչանում են : Պալսում հրատարակվող պարբերական թերթերից շատերը Ռուսաստան չեն մտնում . շատերի մօտքն արգիլուած է . այդ պատճառով անկարող եմ մի քանի կարծիքներ յայտնել մեր լրագրութեան առիթով , թէեւ ներկայ դրութեան մէջ , կ'կամենայի արտայայտել այն մի քանի կարծիքներն , որ Ռուսահայաստանում կազմել են մեր լրագրութեան եւ ձեր գրականութեան մասին :

Թ. Հ.

ՊԵՏԱՐԵԻ ՀԱՍՈՒՍՈՐԴԵ

Նկնահասակ մարդ մը , շատ տղեղ , գորտի սչուքներով , լայնափեռ եւ բերանով , — այսպէս է Պ. Վինտհորսդ , Գերմանիոյ Խորհրդարանին կաթողիկ կուսակցութեան պետը , Պիլմարքի հակառակորդն եւ վերջին օրերու յաղթականը :

Պ. Վինտհորսդ եօթանասուն եւ մէկ տարեկան է եւ քսան տարի է ի վեր անդու անդադար կը հարուածէ իւր 1866 յաղթականն . որովհետեւ այն ատեն Պ. Վինտհորսդ Հանովերի Թագաւորին դատական նախարարն եւ ընդհանուր դատախազն էր : 1867 ին արտասանած է սա նշանաւոր խօսքն որ ցոյց կուտայ թէ կարճահասակ մարդն ինչո՞ւ այնքան կատաղաբար

կը կուտայ այն հոգիներն զիստ և՛ Կուսակցի գիտնալ թէ ինչո՞ւ համար գրաւեցիր զՀանութիւն եւ ոչ Սարգսիս որ մեզ պէս Աւստրիացի հետ միանալով պատերազմեցաւ ձեզ դէմ, եւ կ'ըմբռնեմ թէ զմեզ հարուածելով, նախ կ'աթոյնէին հարուածեցիր եւ ապա հակառակորդներն: Արդարեւ, Պ. Վինտհորստ ամեն բանէ առաջ եւտեղուն կ'աթոյնէի է. աւելի կ'աթոյնէի է քան գերման: Պատին վերայ խօսած տունն կ'ընէ՝ «Թագաւոր-Պապը» Սակայն գիտէ չափ դնել իւր եւտեղեան մէջ: — Պ. Վինտհորստ չափ սրախօս է եւ ոչ ոք կրնայ անոր պէս խնդացնել Գերմանիոյ Խորհրդարանն: Անհատական կենաց մէջ ալ, զուարթ ընկեր մ'է միշտ:

Խորհրդարանին մէջ, մին միւսին դիմաց տեսնելով, զՊիպարը եւ զՎինտհորստ, մարդ կը հասկնայ թէ այս մարդիկ անսպասելի հակառակորդ լինելու են միմեանց: Մին զրէթէ գաճաճ մ'է, միւսն հակայ մը: Մին հոգեով պիտուոր է, միւսը խօսութեամբ ու թուղթ միտադր: Մին կուտ է, միւսը նուրբ: Մին լրբեկն է, միւսը մտացի: Մին է բողոքական դժնայ, միւսը կաթոլիկ յորձեռանդն: Մին, գարեջուր կը խմէ մեծաքանակ, միւսը միմիայն շաքարեղէն: Մին, գոռոզ իւր խոշոր ձեռներուն վրայ գործ կը գործածէ մարմարները կտորելու եւ խոշնդ տաները ջախջախելու համար, միւսը փտա՜հ իւր դէ-ղուէն մատանց վրայ որոցմով կը քակէ կընձիւներն եւ յուշիկ յուշիկ կը հարուածէ թշնամիները: Մին, հաւատացող թէ զօրութիւնն է իրաւունքը, միւսն հաւատացող թէ երգիծանքն ամեն բանի կը յաղթէ, նոյն իսկ իրաւունքին: Վերջապէս, Պիպարը յաղթական նախարար մ'է, եւ Վինտհորստ անկեալ նախարար մը:

(Ֆիկցիոն)

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Կերպող յետադիմութեան. — Եւրոպական թատերգներն եւ մեր գործերն են: — Զաւալեանց եպիսկոպոս եւ Պոլսի զեղներ: — Կերպող յետադիմութեան օգուտները: — Արեւելի կանայք: — Լազարեկի տղայք:

ՕՐՈՒԱՆԻՒՂ, 29 Յունուար

Անցեալ շաբաթ, Մելանիա գրեթէ կը գետապարտէր եւրոպացի հեղինակ մը իւր այն գաղափարին համար թէ՛ յառաջդիմութիւնն, ետ ետ երթալ է: «Ետ ետ երթալով է, կը հարցնէր, որ մարդ կը հասնի արուեստին, քաղաքակրթութեան»: Մեր պատասխանն «այո՛», պիտի լինի, եթէ, հաւատարիմ փորձառական գործուն, լաւ դիտենք, մեր շուրջն: Ով որ մեզմէ անցեալ եւ այս շաբաթներն անցնի Բերայի մեծ փողոցէն եւ կարգայ թատերական ողբերը, կարգայ հայ լրագրաց մէջ ներկայացմանց «տեղեկագրերն» արդեօք չպիտի գոչէ «ո՛հ, յետադիմութիւն, սուրբ յետադիմութիւն»:

Եւ ի՞նչ կը հաղորդեն մեզ ազդերը: Թրաքիա, Հելլոս, Եւֆրատէ կը ներկայացուն ի նպատակայ վարժարանաց, հայ ժողովուրդը կը դիմէ խաւերում ի Փրանսական թատրոն, ծափելու համար Փրանսական խաւերն: Եւ սակայն, երբեմն այդ հայ ժողովուրդը կը դիմէր նոյն Բերայի նոյն մեծ փողոցը, նոյն թատրոնը, որ եթէ ոչ զուտ հայկական բայց գէթ արեւելեան անուն մը կը կրէր: Գերասիմները կը կոչուէին Պէնկլեան, Մաղաբեան, Ալաւեան, Երանուէր Գարաջաւեան, Արուսեակ: Ազ-

դերու վրայ գրուած էին հեղինակներու անուններ, Պէնկլեան, Խորէն, Հէքիմեան:

Եւ այժմ անոնք որ քերականութեամբ փափաքողներ են ազգային գրականութեան, ազգային գեղարուեստից դարգացման, միթէ իրաւունք չունին արձաններ կանգնել յետադիմութեան:

Բայց սակայն իմաստութիւն է, ըսած են, օգտուիլ ամէն առիթէ, եւ կարծեմ թէ օգտակարութեանց ամենէն մեծն է զօրանքն: Ուրեմն մենք ալ շատ անգամ ցաւելով հանդերձ անցեալի վրայ կրնանք օգուտներ քաղել եւրոպական խաղերէն եւ մինչ մէկ կողմանէ կը զուարճանանք, միւս կողմանէ կրնանք մտածել թէ ի՞նչպէս մարդիկ ամէն կողմ նոյն են եւ թէ ի՞նչ սերտ յարաբերութիւն կան մեր ազգային գործոց եւ եւրոպական խաղերուն միջեւ:

Այդ խաղերուն մէջ ամենէն յարմարագոյն մեր ազգային կենաց կարծեմ թէ Սեփիլե Սփիլե է. կամ թէ նորա դիւցազն մեր սիրելի Ֆիկաոն: Ոչ ապաքէն այդ ստիւրիչը կատարեալ տիպար մ'է մեր բոլոր «գործիչ»ներուն: Ինքն է իւր քաղցին Ֆաֆաֆաֆ, զնա կը խնդրեն պառաւները, զնա կը խնդրեն ծերերը, Ֆիկաո կը գոչեն ազդիկները, Ֆիկաոն կը խնդրեն մանչերն: Ինքն է որ կ'աժիլէ, տղուկները փակցնողն ալ ինքն է:

Եւ միթէ այսպէս չեն մեր եւտեղուն գործիչներէն իւրաքանչիւրն: Ամենուրեք մի եւ նոյն Ֆիկաոն են, ամէն ուրեք մի եւ նոյն ազգային ստիւրիչները, մի եւ նոյն տղերուկ փակցնողները: Բայց սակայն շատ առաջ չերթանք: Ոչ մի լրագիր, ոչ մի յանդուգն հրապարակախօս կրնայ ճշմարտութիւնն ամեն տունն ըսել, եթէ միմեանք զրամագլուխ գրուելով լրագիր մը հաստատուի միայն եւ միայն ճշմարտութիւնը խօսելու համար, շուտով կը փճանան միմեանքն եւ անհետ կը լինի լրագիրը: Դա տապաւնեցէ՛ր այս կարծիքը, բայց դիտե՛ք որ Տիւմայի մը կարծիքն է զոր Վլարդի մը աշխատած Ժողովրդական ընկեր: Բայց կը դիտեմ թէ անանց ուզ լաւ անա՛ր բերի այնպիսի ճշմարտութիւն մը զոր եթէ բնաւ չըսէի լաւագոյն կ'ընէի, բայց անգամ մը ըսած գըտնուեցայ:

Գտնուեց մեր Ֆիկաոյին, սիրելի դէմք մ'է այդ եւ եթէ աշխարհականներուն մէջ ունինք շատ Ֆիկաոներ — թերեւս պէտք եղածէն աւելի — դժբաղդ արար եկեղեցականները չեն ընծայիր: Ֆիկաոյի ախպարներ, Քիչ եկեղեցական Ֆիկաոներ կան, բայց ի՞նչ սքանչելի:

Ամենակատարեալն է Գարեգին եպիսկոպոս Սրբանձտեանց, — Ֆիկաո հակառակ իւր փափաքանոց, լաւ հասկանք, վասն զի ամէն եկեղեցական քիչ թէ շատ հանգըտասէր է եւ Ֆիկաո մը աշխուժութեան կենդանի պատկեր է:

Խեղճ Սրբանձտեանց, Վանէն Մուշ, Մուշէն Բաղէշ, Բաղէշէն Տիգրանակերտ, Տիգրանակերտէն Ալին, Ալինէն Քարբերդ, Քարբերդէն Պոլիս, Պոլսէն հաղիւ Տրապիզոն հանդիմա՛ւ եւ ահա՛ կը գոչեն Սրբանձտեանց Մուշ, Սրբանձտեանց Քարբերդ, եւ որոշմունք որոշմանց կը յաջորդեն:

Ֆիկաո հոս, Ֆիկաո հոն, Ֆիկաո վեր, Ֆիկաո վար:

Եւ սակայն ո՛րքան դժ պիտի լինէինք եթէ մեր ամեն գործիչներն ըլլային սիրուն

Ֆիկաոներ: Բայց այդ բաղդը չունինք — եւ ի՞նչ բանի մէջ բաղդաւոր ենք: — Մեր ազգային գործիչներու ոմանց — եւ է՛ն եւս անդուններուն — երեսը նայելով կրնանք տխուր ժպիտով մը ըսել — «ողբերգա՛կ, կատակերգա՛կ»:

Կատակերգա՛կ են երբ «ո՛հ սուրբ եկեղեցի» գոչելով իրենց երեսները կը քսեն եկեղեցիներու սալապատակներուն եւ կ'ըսեն մեր ազգութիւնը մեր եկեղեցին է: Եւ երբ կը տեսնեն եկեղեցական մը որ արժանիք մը ունի, որ ծառայութիւն մը կ'ընէ ազգին, անմիջապէս կը սրեն իրենց բոլոր գէնքերն հաւածական վարելու զնա: Բաւական է որ եկեղեցական մը տղէտ, տխմար լինի, նա է զոր պէտք է սիրելի ընծայել ազգին:

Ոչ ապաքէն այս օրերս դարձեալ տեսանք այս ողբերգա՛կ-կատակերգութեան խաղերն յորս եկեղեցիներ ու եկեղեցականներ կը ներկայացուն ինքնական կամ քարոյական կաշառակերներու գիմակներու ներքեւ: Բայց ենթադրելով իսկ թէ Լըմիաճին փորձութիւններ ունենայ Պոլսը կաշառելու, ո՞վ վարժեցուցած է իրենց այդ փորձութիւնն ունենալ:

Համբաւաւոր Սարգիս եպիսկոպոս Զաւալեանց մը կար, որուն համար կը պատմէին թէ թուաւորած է Ներսէս Կաթողիկոսն՝ անոր քովէ առնելու համար կենսական թուղթ մը Հայոց շահերուն վերաբերեալ եւ զայն Կոմկասեան կառավարութեան յանձնելու: Պոլիս, չեմ յիշեր որ հեղինակն Հայոց պատմութեան դասագիրք մը կը յօրինէ եւ մէջն այս պատմութիւնը կ'ընէ: Հայոց պատմութիւնն ուրիշ տպագրութիւն մ'եւս կ'ունենայ յորում ընջուած են այդ թուաւորման վերաբերեալ խնդիրներն: Լըմիաճնայ սուրբ հայրերն որ մը ժպտելով կը հարցնեն Զաւալեան եպիսկոպոսի թէ ի՞նչպէս եղած էր որ ընթուած են երկրորդ տպագրութեան մէջէն այն կէտերն:

— Է՛ն Պոլսի գրողները, կը պատասխանէ ծերունի եպիսկոպոսը, թուա՛յ են թուա՛յ (ըծնող չուն): Հինց որ մի կտոր ոսկոր գցես առաջինն, ձէնները կը կտրեն իսկոյն:

Լաւ փորձառութիւն ունեցան Լըմիաճնականք եւ յետոյ ոչ թէ ոսկոր այլ նաեւ ոչխարներ ալ նետեցին այդ «թուալայն»ներուն առաջ, վասն զի շատ սնունդի կարօտ էին Խրիմեան Պատրիարքը Զաւալեանը համար: Սակորներով բաւական ոյժ չէին առներ:

Բայց ներողամիտ գտնուինք անոնց որք Կաթողիկոսի մը օրհնութեան կոնգալը կամ եկեղեցւոյ մը նուիրած զանգակը կը համարին կաշառատութիւն: Մեղաւորը ո՛չ ոք է, ո՛չ Կաթողիկոս, ո՛չ նուիրատու, ո՛չ ամբաստանող, մեղաւորը քրո՛նքնն է:

Որքան վէճերէ, ո՛րքան ամբաստանութիւններէ զերծ պիտի լինէինք մեր ալ եւ թէ մեր հարք օգտուելով ժամանակին խառնակութիւններէն, մեր մէջ ներմուծէին, մաքսանեղութեամբ, կաթոլիկութեան «ներդրութիւնը»:

Կաթոլիկ հայրապետի մը ամենէն մեծ շնորհն որ կրնայ սխալեալ իւր հօտին՝ ներողութիւնն է, ներողութիւն որոշեալ շափով, որոշեալ սահմանով: Ոչ ոք կը գանգատի, ոչ ոք կը մեղադրուի: Ներողութիւնը շնորհ մէ՛ մեղաւորներուն: ով որ կ'ուզէ մասնակցիլ այդ շնորհին՝ կարող է մեղք մը գործել:

Ահա՛ Ազարեան Պատրիարք կրնայ վկայել մեր խօսքերուն ճշմարտութեան: Երբ

պիտի մեկնէր ի Հոմո՝ Եկեղեցւոյ ամպլոնէն շնորհեց ի զիմաց Ս. Պատին ներողութիւն ամէն յանցանաց Ստոյգ է որ ժողովուրդը մի քիչ խռովեցաւ, մի քիչ յուզում տրեց, բայց միթէ կարելի՞ էր ազատել այնքան հոգիներ սատանին ճիրաններէն առանց ազմուկի, առանց վրդովման: Եւ ո՞վ համարձակեցաւ մի ամբաստանութիւն ընել ընդդէմ ազատարար Պատրիարքին:

Բայց ներողութեան դրութիւնն ալ ազատ չէ անպատեհութենէ. ոմանք, սխալ ըմբռնում մը կ'ունենան կարծելով թէ կաթոլիկ Պատրիարք մը կարող է ներողութիւն շնորհել ամէն մեղքի: Կայ մեղք մը որոյ մասին ոչ մի Հայրապետ կրնայ արձակում շնորհել, այդ է ընդդէմ կանանց բաղադրութեան պակասութեան մեղքն: Տարրական ճշմարտութիւն մ'է այս, բայց հայրապետներու շրջանակներն նախապաշարեալ են եւ միշտ կը հաւատան իրենց տիրոջ ամենագորութեան:

Եւ եթէ նեղը մոռեն կ'ըսեն՝ հոս արեւելք է, ամէն ինչ ներելի է. ինչ է կինն, Ամերիկայ, Եւրոպա եթէ լինէին ուրիշ խնդիր: Աստ է պէտք է հպատակիլ երկրին սովորութեանց: Մեզ ալ ներուի ըսել թէ նոյն խի Եւրոպա եւ համարէն Ամերիկայ, շատ անգամ արեւելքն օգնութեան կը կոչեն կինը պաշտպանելու համար: Ոչ ապաքէն կը յեղյեղեն Արեւելցի մը պարսիկ բանաստեղծի մը խօսքը «Թէ պէտք չէ զարնել կնոջ եւ ոչ խի վարդով մը»:

Խեղճ տրեւելք, որքան մեղադրանք նորա դէմ կ'առնեն թերութեան մասին եւ սակայն ո՞ր երկիր արեւելքի լեռնականներու չափ մերթ ընդ մերթ այնքան պատիւ, այնքան յարգ տուած է կանանց: Գեռ վերջերս Արփատեան լեռնականներու կանանց դիւցազնական խօսքերն զմայլանք կ'ազդէին ամբողջ Ռուսիոյ:

Ձիւնուորական նոր օրէնքն ի Ռուսիա կը հարկադրէ լեռնականներն գինուոր տալ Ռուսիոյ բանակին: Ոչ կը պատասխանեն լեռնականներն: Երբ Շամիլ անձնատուր եղաւ առաջին պայմանն էր թէ՛ աղատ սլիտի մնայ իւր ժողովուրդը Ռուսիոյ բանակին մէջ ծառայելու հարկէն:

—Ուրեմն գինաթափ եռիք, կը պատասխանէ Տաղստանի կառավարիչն իշխան Նիկո Չաւաւաձէ, պէտք է յանձնել ձեր բոլոր գէնքերը:

—Լա՛ւ, կը պատասխանեն լեռնականներէլ գլուխները, բայց նախ պէտք է երթալ մեր կանանց հարցնել:

Արդարեւ, կ'երթան կը ժողովեն իրենց կիները, կ'առնուն անոնց տատասխան եւ կուգան ըսել կառավարչապետին:

—Մեր կանայք կ'ըսեն որ եթէ յանձնենք մեր գէնքերն, իրենք այլ եւս առանց գէնքի ամուսին չեն ուզեր, հետեւաբար սլիտի ձգեն զմեզ:

Կովկասու կառավարիչն հիացած կը մնայ այս պատասխանին վրայ՝ բայց թէ ինչ սլիտի լինի վերջնական որոշումը, մեզ տակաւին անձանօթ է:

Կնոջ մը համար չէ՞ր, իւր բոլոր համար, որ Պատրիարք լազարէֆ իւր կուրծքը կը բանար ուստի մը ատրճանակին զէմ, բայց կը զարնէր կը տապալէր ուստի: Ստոյգ է որ

այդ քաջարի զգացումները միայն լեռներու մէջ եւ լեռնականներու մօտ կը մնան, եւ առիւծի կորիւններն են որ միշտ եւ փառաւոր կը պահեն արեւելքի անունը:

Չէ՛ր խաբուեր Լազարէֆ, երբ այնքան յոյսեր կը տածէր իւր զաւակներուն վրայ: Կը թողուր զանոնք թափառիլ փողոցները, դաշտերը, լեռներն: Օր մը Լազարէֆի եւ իրտասարդ սպայներէն մին գիտել կուտայ նմա թէ՛ լաւ չլինիր որ այդ տղայներն այդպէս ազատ մնան եւ պէտք եղած հոգը չի տարուիր նոցա: Առիւծ զօրավարը կը պատասխանէ Լազարէֆի բարբառովը:

—Բէֆդ բե՛՛՛ր պահէ, լաջինից դուռը չի դուրս գալ (սիրտդ հանգիստ թո՛ղ լինի, արծիւէն սեւ ագռաւ չի ծնիր):

ՀՐԱԶԴԱՆ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԴԵՐԱՍԱՆՈՒՅԻՆ(*)

(ՇՈՐԱՎԷՊ)

Թ.

Ի Պոլիս, այդ ձմեռն ամէն ուրեք օրուան նորութիւնն էր Երմոգինէի ողբերգութիւնը: Մասիս երիտասարդ բրոնիկագրերը ներկայացուցին դեղանկար պատկերներով յիշատակաց արժանի այն գիշերն «յորում հայկական Մուսայն իւր հոգետաւիզ ըր. «նարն ի ձեռին մեզ այցելեց Մանեաց գազաթէն»:

Հրապուրեցաւ նախ Բերայի հայ ժողովուրդը: Նա յիշեց թէ՛ մի քանի տարի առաջ Նաուսի թատերաբեմէն կը գրաւէին իւր հոգին հայ բանաստեղծներն, եւ այժմ «Տիկին Անկոյի աղջկէն» որ կը քաշէր գինքն ի Բալէ Գրիսթալ, Բերայի հայ երիտասարդութիւնը պահ մը զայրոյթ զգայ. է՛ր չվերանորոգել այդ գեղեցիկ անցեալն: Արիթն ինքնին կը ներկայանար. ի նպատակ Բերայի հայ վարժարանաց սլիտի տրուէր ներկայացում մը. սկսած էին արդէն բանակցութիւնք Ֆրանսական խումբին հետ՝ սակայն Բերայի հայ երիտասարդութիւնը բողբոջեց ընդդէմ այդ բանակցութեանց: Զայրոյթը մեծ էր, «ահագնամուռնջ որոտամբ» ինչպէս կ'ըսէր յետոյ Երմոգինէ Էֆէնտին: Դուրոցաց խնամակալութիւնն հարկադրեցաւ խոնարհիլ հասարակաց կարծեաց առաջ եւ Օրթագիւղի խումբն հրաւիրեցաւ ներկայացնել Երմոգինէ Էֆէնտիի ողբերգութիւնն:

Երեկոյթը փառաւոր եղաւ. ինչ որ Բերա կը պարունակէր նշանաւոր հայ ընտանիք, այն գիշերը ժամադիր եղած էին Ելտօրատօն: Մասերը սրտաբուլիս էին եւ պատկերներ տեղափոխուի: Խելայեղ էին ամէն երիտասարդը ի տես Արեգնապին: Երմոգինէ խանդավառեցաւ, թերեւս առաջին անգամ լինելով կենացը մէջ: Երբ աւարտեցաւ ողբերգութեան ներկայացումն «հեղինակ, հեղինակ» գոչեցին ամէն կողմէ եւ օծեցին զինքը կեցցէներով:

Յետ ողբերգութեան սլիտի ներկայացումէն կատակերգութիւն մը՝ յորում Արեգնապ չուներ բաժին, ինքն առանձնացաւ եւ զգեստները փոխեց: Երմոգինէ կը

սպասէր նմա, գնաց գտաւ զնա եւ իւր համակրալից շնորհակալութիւններն յայտնէ յետոյ հրաւիրեց զԱրեգնապ ընթերիւն: Հարկ չէր դուրս ելնել թատրոնէն այդ ցուրտ գիշերն. Ելտօրատօն եւ Լիւքսէնպուրիի հիւրանոցը կցուած են միմեանց, հեղինակն ու դերասաններն մտան հիւրանոցին ճաշելու խուցերէն մին, նստան փոքրիկ սեղանի մը առաջ, փակեցին դուռն, եւ սպասուորը ծառայեց:

Սննդաբազրելի ուրախութեան մը մէջ էր Երմոգինէն, բայց այն ուրախութիւնը զոր հպարտութիւնը կը պատճառէ եւ ոչ գորովն: Այո՛, ինքն ալ կը նմանէր այժմ Սարտուի մը, Օթիէի մը, Տիւմա Որդոյ մը: Վերջապէս եւրոպացի թատերագուհի հեղինակի մը, հաստատելով փութման յարաբերութիւններ իւր ողբերգութեան գլխաւոր թարգման չեքոսլոններին հետ:

Կը ճաշէին, կը խօսէին, կը խմէին. ուրախ էին, երիտասարդութեան եւ փառաց հրճուանօք զուարթ: Ակնարկութիւններ կ'ընէր Արեգնապ այն սպասուորութեան մասին զոր առաջին անգամ թողած էր իւր վրայ Երմոգինէ: Եւ Երմոգինէ կը բերէր խօսակցութիւնն իւր յօդուածներուն, իւր գրքերուն վրայ: Կը տեսնէր թէ ինչպէս Արեգնապ բերան գիտէր շատ տողեր:

Պարզեց Երմոգինէ իւր տեսութիւններն եւրոպական մատենագրութեան մասին, բայց խոստովանեցաւ թէ սիրող չէր Ֆրանսական արդի գրականութեան, իւր մտատիպարը Ֆրանսայի 17րդ դարու մատենագրութիւնն էր, բայց եւ այնպէս կը հասկցունէր թէ Ֆրանսայի արդի գրականութիւնն ու դեղարուեստը անձանօթ չէին իրեն:

Արուեստներէն անցաւ արուեստագէտներու. տեղեկութիւններ հաղորդեց Երմոգինէ Ֆրանսայի դերասաններու եւ դերասանուհիներու վրայ: Օգտեցաւ առիթէն որպէս զի շանթակոծէ արեւելեան նախապաշարութեանն որոցմով տողորուած, Պոլսեցին կը նկատէ դերասանն ու դերասանուհին իբր արարածներ որք վաճառականներու հաւասար լինելու իրաւունքն զուրկ են: Բայց վրէժխնդրութեան ժամն հասած էր. Ոչ ապաքէն դեռ երէկ Եւրոպայի մէջ վարձակ մը — այսպէս կ'առնուանէր երգչուհին, գրաբառ խօսելով նոյն խի սրտի տրոփմանց վայրկեաններու մէջ — Ատելինա Բագդի մը կին կը լինէր Ֆրանսայի աղանակաւի մը, ճաքէի մը: Եւ միթէ Արեւելցիներն աւելի նախապաշարեալ պէտք է լինին ընկերական դրոց մասին քան աղանակաւեան ժողովուրդներն:

Եւ Արեգնապ կը կարծէր ըսել սիրոյ նուազ մը: Մէրն ու գինի խումբէն էին խեղճ աղջկան սիրտն ու միտքն: Աչերուն մէջ կը վայլէր այն փայլն զոր սէրն ու բուցակիժ հուր մը միայն կը պատկերացնէին, եւ կը պատկերացնէին մօայն աղկանց աչերու մէջ:

Կ'ընթանար այդ բողբոջած հոգն եւ Երմոգինէի աչերուն մէջ. նա չէր կարող դիմանալ, խոնարհեց գլուխն Արեգնապի մազերուն վրայ, ափերուն մէջ առաւ այդ սկզբնական մազերն եւ մեղմիկ համայրներ դրոշմեց. թուրակի էր դիմադրութիւնն Արեգնապի կողմանէ:

Յուրտ էր, շատ ձիւն կուգար, ինչպէս կարելի էր երթալ այդ գիշեր մինչեւ Օրթագիւղ: Հիւրանոց մ'էր Լիւքսէնպուրի ուր կանայք կարող էին հանգիստ ու ազատ սենեակ գտնել եւ յետոյ յաջորդ օրը կիրակի մը հրճուալից ժամեր կ'անցնէին

(*) Շարունակութիւն «Մասիս»-ի Յունուար 10-17-24 թիւերէն:

միտարին. Այսպէս կ'ըսէր երմոգինէ, գլուխն յենած Արեգնազի մազերուն:

Ձէ՛, այդ. անհնարին էր, ի՞նչ կ'ըսէին իւր ընկերներն:

Եւ արդէն կը լսուէին դուրսէն նոցա ձայներն. վերջացած էր կատակերգութիւնն, մեկնած էին հանդիսականներն: Մի բանի անձինք կը հրաւիրէին դերասանական խումբը զիջերային ընթերցի մը: Լիւքսէնպուրկի մէջ եւ ամէնքը կը զիջէին հիւրանոցի սենեակներն: Արեգնազ չէր գիտեր այս ամէնը, բայց կը լսէր ձայներն, անմիջապէս ոտք ելաւ, չէր կարելի թոյլ տալ որ նոքա ներս մտնելով յանկարծ զինքը միայնակ գտնեն Երմոգինէի հետ: Գնաց խառնեցաւ խումբին մէջ, ոչ ոք զիտած էր նորա բացակայութիւնը: Երեւցաւ յետոյ Երմոգինէ, մասնակից էր ընթերցաց, թէպէտ ոչ ինք, ոչ Արեգնազ ճաշելու ակորժակ ունէին այլ եւս:

Աւաւտեան դէմ էր երբ դերասանական խումբը մեկնեցաւ թատրոնէն յօրթագիւղ:

Ժ.

Այս օրի գրեթէ մօտ Արեգնազ անկողինն էր գեռ: Աչքերը կը բանար, ալատուհանները ծիւղապատ էին, կը ձիւնէր դուրսը, չէր ուղեր ելնել անկողնէն: Փաթթըւած վերմակին մէջ կ'երայէր իւր սիրտն վրայ: Բացուեցաւ իւր սենեկին դուռը, գերանանուէի մէջ որ ներս մտաւ եւ հագորդեց թէ ծեր մարդ մը, ձկնորսի պէս մէկն եկած զինքը կ'ուզէր: Գուռ-Գարուէն կ'ուզար, նամակ մը բերած, կ'ուզէր ալ Արեգնազի ձեռքը: Գող ելաւ աղջիկը, ցատկեց անկողնէն, վրան բան մը առաւ եւ գնաց քովի սենեակն, ուր կը գտնուէր ծերունի:

Քալելով եկած էր Գուռ-Գարուէն, ոչ չողեկաւ, ոչ թրամուէյ, ոչ չողեհաւ կը բանէր, եւ ճանապարհորդութիւնը պատմելով կը փնտռէր գրպանին մէջ նամակը: զրտաւ, հանեց, տուաւ: Գուռնաթափ եղաւ Արեգնազ: Պատուելին շատ հիւանդ էր: Դրացի մը երկու տողով դայդ կ'իմացունէր.

Փամանակ չկար սպասելու. անմիջապէս հագուեցաւ, խմաց տուաւ ընկերներուն թէ չպիտի գար այն գիշերը: Վար ի՞նչ, շուկայն, վարձեց կառք մը ուղղակի Գուռ-Գարուէն երթալու: Փողոցը նեղ էր, կառք չէր մտներ: Ի՞նչաւ կ'առքէն փողոցին ծայրը: Կը մօտենար Արեգնազ իրենց տան. կը տեսնէր թէ գուռը բաց էր, դրացիներ կը մանկէին կ'եղէին, անսխալակ նշան վտանգաւոր պարտադրի մը: Ներս մտաւ, դէմն ելնողին կը հարցնէր թէ ի՞նչ կար:

— Բան մը չկայ, բան մը չկայ, մի՛ վախնար, կ'ըսէին:

Սանդուխին գլուխն Էֆտիկի դէմն ելաւ լալով, գրկեց Արեգնազն, համբուրեց, եւ միտարին մօտն Պատուելին սենեակն:

Պառկած էր անկողնոյն մէջ. գուռնատ, գրեթէ կիսամեռ, զ ժուարաւ շունջ կ'առնուր: մօտեցաւ Արեգնազ, ձեռքը բռնեց, համբուրեց: Բացաւ աչքերը ծերունին, ապրիս մը ըսաւ, կէս ժողովով մը:

Քիչ մը նստելէ վերջ դուրս ելաւ Արեգնազ, պէտք էր թոխի մը բերել, մարդ մը ճարեց, խրկեց բժշկին: Բաւա բժիշկին ինչ որ սովոր են միշտ ըսել ծերերու համար:

— Կանթեղին իւզն հատեր է:

Ձէր բաժնուէր Արեգնազ մեծ հօրն անկողնոյն քովէն: Տխուր, պարտասեալ կը

հսկէր ծերունւոյն: Կ'ուզէր վանել իւր մշտնէն վշտալիր յիշատակներ, բայց Երմոգինէի պատկերը կ'ուզար կը ներկայանար իւր մտքին առաջ, բայց ոչ առջի գիշերուան թատրոնի պատկերն, այլ ամբան այն գիշերներուն պատկերն յորում Պատուելին անօթի, խեղճ, հառաչելով կ'ըսէր:

— Աստուծոյ գտնէ այդ մարդը:

Եւ յետոյ միջոց մը իրեն այնպէս թուեցաւ թէ՛ լսեց մեծ հայրն որ կը մրմնջէր:

— Ա՛յ, այն մարդն, այն մարդը:

Գիշերը կը յառաջանար: Քանի մը դրացի կիներ եկած էին. Էֆտիկի հետ բոլորած էին անկողնոյն շուրջն: Արեգնազ նստաւ, բանի մը վրայ կը հանգչէր մի քիչ, կը մրափէր: Էֆտիկ՝ որ անկողնոյն շատ մօտն էր, տեսաւ թէ հոգեվարքին հռնդիւնն ալ չէր լսուէր: Շօշափեց մարմինը՝ պաղ էր: Լինցած էր: Երկու կնոջ հետ արթնցուցին Արեգնազը, կամացուկ մը դուրս հանեցին:

— Աստուած քեզի օրեր տայ, ետվումս կ'ըսէին:

Թաղման հանդէսը կատարուեցաւ յաջորդ օրն: Աշակերտներէն շատերը ներկայ էին: Աչքալարարութիւն տղուած էր, ոչ լրագիրներու մէջ բան մը գրուած: Քրոնիկագրերն եւ ոչ իսկ յիշատակութիւն մը ըրին այդ մարդուն համար՝ որ աւելի բան կէս դար իւր աղքեցութիւնը ներդրած էր ազգային հոգւոյն վրայ:

Արեգնազ անմիջապէս էր. սեւերն հագած նստած էր. կ'ընդունէր զգուրդ ողջ կենայտի եկողներն: Ազգականներ, ազգականներ, ամէն անկիւններէ կը վխտային: Այն շարքուն լուր խրկեց դերասանական խումբին թէ՛ այլ եւս՝ ներկայ եղանակին մէջ կարող չէ մասնակցիլ իրենց խաղերուն, իւր սուգն անհնարին կ'ընէր դայդ:

Այս լուրն անսխալ եղաւ խումբին: Իւսկիւտար, Կէտիք-Փաշա պիտի ներկայացնէին Երմոգինէի պարերգութիւնը: Բերայէն վերստին ուզած էին դայն: Արեգնազի բացակայութիւնը կը խանգարէր այդ ձեռնարկը: Նորա գերն երբ ուսուցանելու ըրիչի մը եւ օճ կարող էր յաջորդել արժանաւորապէս Արեգնազին: Երմոգինէ կատարած էր: Իւր փառքը կը բեկանէր, կարող չէր այլ եւս լիովին վայելել իւր յաղթանակները:

ԺԱ.

Ձմրան վերջին օրերն անցան շատ սր-խուր Արեգնազի համար. գրեթէ միայնակ էր. ժամանակը կ'անցունէր պարզ կարեր կարելով: Կը կարէր ու կը մտածէր: Կըստէր որ Երմոգինէ այցելութիւն մը տայ իրեն: Բայց նա չէր երեւցած: Գուռ-Գարուէ մէջ խօսուած էր բաւականէն աւելի նորա յարաբերութեանց մասին: Արեգնազի հետ յիշելէ Արեգնազի, տեղի պիտի տար չարախօսութեանց, եւ որ աւելին է կը կասկածէր թէ գուցէ թաղեցիք անպատշաճ համարէին որ դպրոցի գլխաւոր ուսուցիչը գայթակղական ընթացքի մը մէջ գտնուի: Իւր շահը կը պահանջէր հետոյ մնալ Արեգնազէ. բայց եւ ոչ իսկ երկու տող գրեց: Եւ Արեգնազ կ'սպասէր:

Օր մը Էֆտիկ ըսաւ.

— Իմացա՛ր, գետնին տակն անցնելուն նշանուէր է:

— Ո՛վ,

— Սա ի՞նչ կ'ըսեն, վարժապետ մը կայ, տէտեղ գործէն հանեց տէ տեղն անցաւ:

Արեգնազ հասկցաւ, գուռնաթափ եղաւ:

— Որո՞ւ:

— Չկայեմ, Խառիգեղէն աղջկան մը, երեք հարիւր ոսկի ալ դրախտումս:

Այդ օրէն ի վեր Արեգնազ ինկաւ խոր տխրութեան մը մէջ: Դեռ հազիւ տասն եւ եօթն տարեկան եւ արդէն հմայաթափ եղած էր կեանքէն: Առաջին սէրն էր եւ վերջինն եղաւ: Վայրկենական տղաւորութեան մը ծնունդ չէր այդ սէրը: Կը շարունակէր կարել, բայց ոչ այլ եւս գեղամըպիտ երազները կը կարճէին օրուան ժամերը:

Սպառեցաւ նաեւ այն փոքրիկ գումարը զո՛ւ կրցած էր ձեռք բերել Օրթագիւղի եւ Բերայի ներկայացումներէ: Պէտք էր ապրիլ: Ներսասարգութիւնը թոյլ չէր տար նա անձնատպան լինել: Եւ չէր կարող ապրիլ Գուռ-Գարուէ մէջ ուր արդէն ճերեսէ ինկած էր:

Իւր հաւատարիմ Էֆտիկին հետ մտածեցին ելնել Գուռ-Գարուէն երթալ հեռաւոր գիւղ մը ուր ոչ ոք լսած իրի իրենց անունն եւ անդ աշխատիլ ու սպասել:

Հետաքրքիրները կարող են այսօր գտնել Արեգնազն Ոսկեղիւրի գրեթէ մոռցուած անկիւններէն մին, Այվաւար, ուր չուած էր Էֆտիկի հետ: Անդ յաջորդած էր գլուխն մարդ մը որ իրեն բերէր զինուորական զգեստներ, կարելու համար: Կ'ապրին աղքատիկ բայց հանդիսաւ: Էֆտիկ բաւական ծերացած է. բայց Արեգնազ ուսած է աշխատիլ: Էֆտիկի վերջին փափաքն է շնորհքով մէկը գտնել եւ ամուսնացնել Արեգնազը: Նախկին դերասանուհին բաւական մոռցած է անցեալը, թէպէտ ուշադիր մէկը կրնայ զիտել որ տխրութեան նշանները բոլորովին չեն փարատած դէմքին:

Էֆտիկ գրեթէ յաջորդած է իւր ձեռնարկներուն մէջ: Ուկերիչ մը որ լաւ գործաւոր մէ՛ եւ բաւական ուսեալ, եկած տեսած է Արեգնազն, հաւանաւ եւ այս շարթու նշանուէրն ալ կը կատարուի:

Վ. Ե. Զ.

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ. Հեռագիրն հաղորդեց թէ Մոսկուայի Մակեդոնսկի վեհաժողովը թերթը խմբագրականաւ մը կը պախարակէ Գերմանիոյ արտաքին քաղաքականութիւնը: Պ. Կատկով, այդ պահանջողական թերթին խմբագիրը քննադատելով Ռուսիոյ համար Պիզմարը իշխանին քաղաքականութիւնն, եւ նպաստաւոր համարելով զայն Ռուսիոյ, խորհուրդ կուտայ պիզմարը իշխանին վերջացնել այլ եւս գաղափարութիւններ կազմելու եւ բակելու խաղն ու գոհանալ ամ տարեկան գերմանական միութիւնը: Պ. Կատկով կը հրաւիրէ նաեւ Պիզմարը իշխանին ի բաց մերժել Եւրոպիոյ վերայ զիկտատորական գեր կատարելու գաղափարն:

Այդ յօդուածն համարուելով նշանակութեան արժանի հեռագիրն հաղորդեց զայն ամէնուրեք, մանաւանդ որ Ռուսիոյ հեռագրաց չիւսիսային գործակալութեան տընտրէն, ինք Պ. Կատկով լինելով դիւրութիւն ունի ընծայել իւր յօդուածներուն երապական կարեւորութիւն, հեռագրելով զայն ամէն մայրաքաղաքաց: Պ. Կատկովի յօդուածներուն կ'ընծայուի բացառիկ կա-

րեւորութիւն մը , վասն զի այդ հրապարակաբեր Ռուսիոյ Այստեք սիրելին է եւ մինչեւ իսկ խորհրդակտնը : Ասկայն յիշուած թիւն մը կայ : Պ. Ատակով օգոյցեցիկ է ներքին գործոց մասին եւ ոչ թէ արտաքին քաղաքականութեան խնդիրներու մէջ : Արտաքին քաղաքականութիւնը Այստեք ձեռաց մէջն է եւ զերծ հրապարակագիրներու ազդեցութենէ :

Ա. Ատակով նախարարութեանց տապալելի մ'է. նա կարող եղաւ տապալել զտապալան եւ եւրոպական նախարարներն , թէպէտեւ այս վերջինս անուանուեցաւ , հակառակ Պ. Ատակովի թշնամութեան , նախագահ Նախարարաց Խորհրդին կամ Յանձնաժողովին , ինչպէս կ'ըսեն Ռուսիոյ մէջ :

Պ. Ատակով աւելի ազդեցիկ է ի Բեդերսպուրկ քան ի Մոսկուա ուր կը հրտաարակուի իւր թերթին Այդ թերթը , Մոսկովէ վերադառնալէն կը տպուի միայն 7,000 հատ մինչ Մոսկուայի ուրիշ ազատական թերթ մը ինչպէս Ռուսիոյ Կոնքէր աւելի քան 20,000 հատ : Բեդերսպուրկի ազատական Նախագէն 23,000 կը տպէ , իսկ պահպանողական Նախագէն 30,000 :

Պ. Ատակով անհաշիւ թշնամի է Ռուսիոյ ամէն ազդեցութեանց որք ունի շէն : Շատ վնասներ պատճառեց Ատակովու , մանաւանդ տնտեսական խնդրոցմէջ : Ատակովու առեւտրական շահերը միշտ զոհել կուտայ Մոսկուայի գործարարատէրերու շահուց : Սակայն Եւրոպիոյ տնտեսական թերթերը կը կարծեն թէ Պ. Ատակովի եւեւամտական քաղաքականութիւնը մահաբեր կրնայ լինել Ռուսիոյ :

ԳԵՐՄԱՆԻԱ. Իրաց վիճակը թէպէտեւ ծանր է , այսու հանդերձ գրեթէ ապահովեալ է որ Գերմանիոյ եւ Ֆրանսայի միջեւ պատերազմ չպիտի ծագի : Անգլիոյ լրագիրները դրուատելով Ֆրանսայի նախարարներն - խաղաղասիրական յայտարարութիւնները , մեծապէս կը յուսան թէ Պիզմարը իշխանն եւս առիթէ մը օգուտ պիտի քաղէ հրապարակաւ նոյն օրինակ յայտարարութիւններ ընելու :

Արդէն իշխանն ապահովիչ յայտարարութիւններ ըրած է բարեկամ տէրութեան մը դեսպանին : Գերմանիոյ կայսրն արքունական հանդիսի մը առթիւ ընդունելով իւր բանակին զօրապետներն , ըսած է նոցա թէ՝ ինչ որ ալ լինի՝ խաղաղութիւնը պիտի պահպանուի Ֆրանսայի և Գերմանիոյ միջեւ :

ԳԱՐԱՏԱՂ. Այս փոքրիկ իշխանութիւնն տնդադար հետամուտ է պատերազմական պատրաստութեանց : Ի վիճինս համոզում կը տիրէ թէ՝ այն պարագային յորում պատերազմ ծագի , Ռուսիոյ և Աւստրիոյ միջեւ , Գարատաղ պիտի կարենայ նեղել զԱւստրիա յարձակելով Հէրսէլի վրայ :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՃԱՆՍ ՀԱՎԱՍ

—Վիեննա , 7 . Բաւ Գրեթեմանի կ'ըսէ թէ անգլիական նախարարութեան մէկ անդամն յայտարարեք է թէ ո'չ Ֆրանսա և ո'չ Գերմանիա մտադիր են այս պահուս պատերազմի միմեանց հետ , և թէ պուլկարական խնդիրը միայն կրնայ ընդհանուր պատերազմ մը յառաջ բերել : Ուստի , անգլիական նախարարութիւնը կը ջանայ Ռուսիոյ մերձեցալ և ամեն ջանք ի գործ պիտի

տի դնէ խաղաղ լուծման մը յանգելու համար , նոյն իսկ զիջողութիւններ ընելով :

Բարիք , 10 փետրուար

Երեւոյնաց Ժողով . Գոնգոռուայի (Վատիկանի և Ֆրանսայի միջեւ կրօնական դաշնագիր) յանձնախումբն 9 ի . դէմ 11 ձայնիւ ընդունեց Եկեղեցւոյ և Պետութեան բաժանման սկզբունքը :

Պերլին , 10 փետրուար

Գերմանիոյ կաթոլիկ եպիսկոպոսներն արգիլեցին իրենց եկեղեցականներուն՝ մասնակցիլ ընտրական յուղման ընդէմ զինուորական եօթնամեայ ծր սգրին :

Լոնտոն , 10 փետրուար

Աւասիկ Ս. Գէորգի Հանովէր Սգուէյր թաղին ընտրութեան արգիլեցին .

Պ. Կոշըն , Եւրոպական Նախար , 3702 քուէ (ընտրեալ)

Պ. Հէյզման , արմատական , 1545 քուէ Երեսփոխանաց Ժողովոյ մէջ , Սըր Հ. Թայլըր հարցուց թէ իրաւ է որ Սըր Հ. Ուոլթ պիտի առաջարկէ Բ. Դրան՝ Եգիպտոսի եւ Սուէզի ջրանցին՝ չէզոքացումն : Արտաքին գործոց նախարարի խորհրդական Սըր Ջ. Ֆէրիլսըն պատասխանեց թէ կառավարութիւնը չկրնար բան մ'ըսել արդի բանակցութեանց վրայ :

Հոռն , 10 փետրուար

Երեսփոխաց Ժողովոյ նստերը դադարեցան մինչեւ ցլուծում նախարարական տագնապին :

ՀԻՆԴՍՏԱՆԻ ԱՌՈՒՐ ԺՈՂՈՎՆ

Ի ՊԱՏՐԱՐԱՐԱՐԱՆ

Ինչպէս յայտնի է , Կայսերական Պալատան Գարտուղարութեան կողմէ ի Պատրիարքարան ուղղեալ պաշտօնագրոյ մը համաձայն , կը յայտարարուէր թէ Պէշիքթաշի գերեզմանատունն , ուր արդէն երկար տարիներէ ի վեր մեռեալ չի թաղուիր , և որոյ քարերն հողին տակ ծածկուած են , Կայսերական Պալատան պարտէզներուն կից գտնուելով , հարկ կը դատուի որ բոլորովին միացուի այդ պարտէզներուն հետ : Ուստի , Պատրիարքարանը կը հրահրուէր պէտք եղած միջոցները տնօրինելու , սոյն միացումն իրապէս ի կատար հանելու համար :

Այս խնդրոյ վրայ խորհրդակցելու համար , Ամեն Ս. Պատրիարքն արտասովոր ժողով մը գումարեց հինգչաքթի , հրաւիրելով ո'չ միայն խառն ժողովոյ անդամներն , այլ նաեւ Ազգ. Ժողովոյ Դիւանը , Նախաքննիչ Դիւանաց Ատենապետները , Տեսուչ Խորհրդոց Ատենապետները , Մայրաքաղաքի բոլոր քարոզիչներն , աթոռակալներն և աւագերէցներն , և Պէշիքթաշի Թաղ Խորհուրդն և երեսելիներն :

Այս մեծ եւ արտասովոր ժողովոյ մէջ ժամերով խորհրդակցութիւնք եղան , եկեղեցականաց կողմէ առաջարկեցաւ խնդիրն յանձնել եկեղեցային Համագումար ժողովոյ , և ի վերջոյ որոշուեցաւ խնդրոյն որոշումը թողուլ խառն ժողովոյն , որ ի նիստ հրաւիրեալ է առաջիկայ չորեքշաբթի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՄԵՐ

Բ.

ՀԱՅ ՎԱՐԺԻՉԻ ԵՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ Ի Կ. ՊՈԼԻՍ

Գրեւոյ

Յ. ՈՍՏԱՆ

Ի Նպաստ Ս. Փրկչեան Ազգ. Հեռագրանոցի Դին 5 դահլիւկան

Կը գտնուի Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան գրասենեակը , Կ. Պոլիս , Մեծ Նոր-խան թիւ 49 և բոլոր հայ դժբախտաց քով :

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵԱԿԸ

Հեղինակ ԱԼԵԿՍԱՆԴՐ ՏԻԻՄԱ

Թարգմանիչ Բ. Մ. ՊՈԶՆԱՃԵԱՆ

Յ. Բրիտանիոյ տարեկան Էֆէնտի , ԴԱՐԲՆՈ-ՅԱՊԵՏԻ գտած ջերմ ընդունելութենէն քաջալերեալ , այժմ սկսած է թերթ տալ թերթ հրատարակել Աղեքսանդր Տիւմայի այս նշանաւոր վէպն , որ չորս հատորէ ունի բաղկանայ : Բաժանորդագրութեան գինըն է 8 ական երեսներէ բաղկացեալ 16 թերթի , այսինքն 128 երեսներու համար 5 շաբաթ մինչեւ ԴԱՐԲՆՈՅԱՊԵՏՆ 3 ական երեսներէ բաղկացեալ 12 թերթ կը տրուէր :

Բաժանորդ դրուելու փափաքողք պէտք է դիմեն թարգմանչին՝ Բիւզանդ Էֆ. Պոզնաճեանի Գրատունն ի Չաքմադըլար-Եօզուէ թիւ 36 , ինչպէս նաեւ Հայ գրաշարաց ընկերութեան տպարանն , Պապը Ալի փողոց թիւ 32 , առ Յարութիւն էֆ. Բրիտանիոյ տարեկան Պոզնա և Յակար աղաներուն , և Սէփէթճի խանի դէմ ծխախառ Գէորգ աղային և լրագրատնայիններուն :

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ պատկերազարդ հանդէսը կը հրատարակուի տասն եւ հինգ օրը մի անգամ , իւրաքանչիւր թիւը մեծադիր 16 երեսներէ եւ 3-4 պատկերներէ բաղկացեալ :

24 տետրի տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 40 , իսկ գաւառաց համար 45 դահլիւկան :

Ներկայ տարուոյ ԲՈՒՐԱՍՏԱՆԻ բաժանորդք ամեն ամսոյ տասն եւ հինգին «ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿԻ ՊԱՆԴՈՎ» անուն պատկերազարդ գրքէն 16 երեսէ բաղկացեալ մէկմէկ թերթ պիտի ստանան , որով տարեգումն 240 երեսներէ բաղկացեալ պատկերազարդ գիրք մը նուէր ստացած պիտի լինին :

Պոլսէն բաժանորդ դրուիլ փափաքողք պարտին դիմել Նշան Կ. Պէրպէրեանի տըպագրատունը , Կ. Պոլիս , Էսքի Չապթիէ ճատտէսի , թիւ 83 :

ԽԱՌՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Գրեւոյ ԿԻՐԱԿՈՍ Ս. ՂԱԶԱՆՃԵԱՆ

Այս գործով Ղազանճեան Էֆէնտի կը պատմէ իւր ուղեւորութիւններն ի Հայաստան , ի Սուրիա և ի ռուսական Հայաստան : Կը պարունակէ յոյժ շահեկան տեղեկութիւններ և դիտողութիւններ , 196 երես : Կը ծախուի 6 դրուչի ամեն հայ գրախաճառաց քով :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻ ԻՐԱԳՐՈՒ